ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Անալիտիկ» ՓԲԸ 2019թ. տարեկան

ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ որոշման)

ք. Երևան **04.08.2020թ.**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Ս. Պապիկյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար՝ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով
Հ. Բատիկյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար
Ժ. Հարությունյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու
Ս.Սարգսյան	«Անալիտիկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Ժողովի նախագահ՝ Ս. Պապիկյան

Քարտուղար՝ Ժ. Հարությունյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1) 2019 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում
2) վերստուգողի /աուդիտի/ եզրակացության ներկայացում
3) 2019 թվականի տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում
4) 2019 թվականի տարեկան շահույթի (վնասի) հաշվի հաստատում
5) 2019 թվականի տարեկան շահույթի բաշխման և շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց ընկերության 2019թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը /կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՀԱՐՑ 2

Լսվեց ընկերության վերստուգողի /աուդիտի/ եզրակացությունը:

Ներկայացնող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունելով վերստուգողի եզրակացությունը, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել «Անալիտիկ» ՓԲԸ 2019թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

ՀԱՐՑ 3

Լսվեց ընկերության 2019թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը /կցվում է/:

Զեկուցող- Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հիմք ընդունելով ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի եզրակացությունը, հաստատել ընկերության 2019թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

ՀԱՐՑ 4

Լսվեց ընկերության 2019թ. շահույթի հաշվի հաստատման հարցը /տեղեկանքը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել ընկերության 2019թ. տարեկան

զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 9573,0 հազ. դրամ և զուտ շահույթը՝ հաշվի առած ավելացումները /շահութաբաժնի հաշվարկի 060 տող/ 10205,0հազ. դրամ:

ՀԱՐՑ 5

Լսվեցին ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցերը /առաջարկությունը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ» կետով, հաստատել ընկերության 2019թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի /հաշվի առած ավելացումները/ 50 %-ը՝ 5102,5 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5 %-ը՝ 479,0հազ.դրամն ուղղել ընկերության պահուստային հիմնադրամ.

մնացած՝ 3991,5 հազ. դրամը /9573-5102,5-479/ թողնել որպես չբաշխված շահույթ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ս.ՊԱՊԻԿՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**